

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Ա—Գ ԴԴ. ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Նախագրիգորյան շրջանում Հայաստանում արդյո՞ք եղել են քրիստոնեական համայնքներ, թե ոչ, արդյո՞ք այդ շրջանում գոյություն է ունեցել քրիստոնեական եկեղեցի: Այս հարցին անդրադարձել են շատերը, որոնց կարելի է բաժանել երկու խմբի. ուսումնասիրողների մի կգալի մասը, ի գլուխ ունենալով Հայ Եկեղեցու պատմության հմուտ մասնագետ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին, ընդունում է նախագրիգորյան շրջանի Հայ Եկեղեցու գոյությունը, որը ավանդական և դարերով նվիրագործված դիրքորոշումն է, իսկ մյուս մասը՝ ոչ:

Հայ Եկեղեցու ամենանվիրական ավանդություններից մեկն է Թադեոս և Բարթողիմեոս առաքյալների քարոզությունը Հայաստանում և նրանց հրաշագործ ձեռքով Հայ Եկեղեցու հիմնադրումը:

Սակայն այս ավանդությունը գրի է առնվել Ե դարում, քանի որ գրերի գյուտով է, որ սկիզբ է առնում հայ գրականությունը: Եվ այդ պատճառով էլ չորս-հինգ դար հետո գրի առնված ավանդությունը որոշ չափով կորցրել է իր սկզբնական պատկերը և հասկանալի է, որ շատ եղելություններ մոռացվել և կամ այլ գույն կամ տեսք են ստացել: Այդ հանգամանքն էլ, պարզ է, պատճառ է դարձել, որ ուսումնասիրողները փաստերին մոտենան տարբեր դիրքերից ու տարբեր մեկնաբանություններով հանդես գան:

Անցյալ դարի մի խումբ հայագետներ, «չգտնելով գոհացուցիչ փաստեր», սկսել են կասկած հայտնել հիշյալ ավանդության պատմականության վրա, մերժելով այն բացարձակապես, «մինչև իսկ ուրանալով քրիստոնեության գոյությունը Հայաստանի մեջ՝ Գր. Լուսավորչի քարոզությունեն առաջ»[1]:

Սրանցից ոմանք, հիմնականում եվրոպացի գիտնականներ, նկատի էին առնում վերոհիշյալ ավանդության անհարազատությունը, ինչպես նաև հույն և լատին պատմագիրների լռությունը, մինչ մի շարք կաթոլիկ հայ վարդապետներ, հատկապես Վիեննայի դրոշոցի ներկայացուցիչներ, կարծեք ավելի տարված հերքելու Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի այն տեսակետը, որ սույն ավանդության վրա է հիմնում Հայ Եկեղեցու ինքնագլուխ կազմակերպություն լինելու հանգամանքը, ամեն կերպ աշխատում էին ժխտել նախագրիգորյան շրջանի Հայ Եկեղեցու գոյությունը և այդ ճանապարհով նաև՝ Հայ Եկեղեցու ինքնագլուխ լինելը:

Հայաստանում նախագրիգորյան շրջանի քրիստոնեության գոյության ամենապորավոր հերքումը փորձեց կատարել Հ. Վարդան Հացունին[2], որը մեկ առ մեկ վկայակոչելով բոլոր նպաստավոր փաստարկները, դրանք բոլորն էլ համարեց անարժեք ու վիպային, ոչ թե գիտնականի անաչառությամբ, այլ Հայ Եկեղեցին նվաստացնելու կանխահայտ դիտավորությամբ: Նման ոչ գիտական ուղիով

---

[1] Հ. Պողոս Անանյան, Քրիստոնեության հետքեր Հայաստանի մեջ Ս. Գր. Լուսավորչի քարոզությունեն առաջ, Վենետիկ—Ս. Ղազար, 1979, էջ 6:

[2] Հ. Վ. Հացունի, Կարևոր խնդիրներ Հայ Եկեղեցոյ Պատմության, Վենետիկ—Ս. Ղազար, 1927, Գլ. Ա, Հայ Եկեղեցին կա՞ր Լուսավորչէ առաջ, էջ 1—165:

առաջնորդվեց նաև Հ. Ս. Կոգյանը[3], ջանալով ավելի կորացնել շեշտը և պատճառաբանությունները, ունենալով մեկ նպատակ, այն է՝ ամեն կերպ աշխատել մերժել Օրմանյանի տեսակետը և ջանք ու եռանդ չխնայել ամեն տեսակ վարկաբեկիչ արտահայտություններով նսեմացնելու Հայ Եկեղեցու պատմության մեծ երախտավորի հեղինակությունը:

Կարծում ենք, որ պատմական փաստերից բացի, վաղ դարերի այն իրադարձությունները, որոնք իրար հաջորդեցին, լավագույնս հերքում են նրանց կարծիքը. նախ այդ ինչպե՞ս եղավ, որ Հայաստանում մինչև Ս. Գր. Լուսավորիչը բնավ քրիստոնյաներ չկային և հանկարծ Հայաստանը առաջինն է ընդունում քրիստոնեությունը որպես պետական կրոն: Այդ ի՞նչ հրաշք էր և ի՞նչ կորությամբ մի ողջ ժողովուրդ, որ բնավ չգիտեր՝ ինչ է քրիստոնեությունը, հանկարծ թողնում է իր դարավոր ու նվիրական ծեսերն ու կրոնը և դառնում քրիստոնյա:

Հայաստանում նախագրիգորյան շրջանի քրիստոնեության գոյությունը ժխտողները ստեղծում են մի անհիմն ու պատմական փաստերից կուրկ տեսություն, որ շատ ավելի առասպելական է ու վիպային, քան նրանց քննության ենթարկած ավանդությունները, որոնք, համենայն դեպս, իրենց մեջ պարունակում են պատմական հիմքեր և երբեք չեն հակասում տրամաբանությանը:

Դեռևս Ընդհանրական Եկեղեցու այնպիսի նշանավոր հայրեր, ինչպիսիք են Տերտուղիանոսը (160—230) և ապա նրանից օգտվելով՝ Օգոստինոսը (354—430), անդրադառնալով «Գործք Առաքելոց»-ի «Ի Միջագետս, ի Հրէաստանի և ի Գամիրս» (Բ 9) արտահայտությանը՝ այն սրբագրել են «Ի Միջագետս, **ի Հայաստան** (ընդգծումը իմն է.—Վ. Բ.) և ի Գամիրս» ձևով[4], մի կարևոր հանգամանք, որ վկայում է հայերի՝ քրիստոնեության հետ ունեցած ամենավաղ շփման մասին: Տերտուղիանոսը Բ—Գ դարերի անձնավորություն է: Հետևաբար գոնե այդ շրջանում Հայաստանում պետք է անպայման քրիստոնյաներ եղած լինեին, որպեսզի նրան մղեին կատարելու նման սրբագրում:

Մի բան պարզ է, որ Տրդատ Գ-ի կողմից ընդունված նոր կրոնի պետականացման փաստը ինքնին հաստատում է, որ քրիստոնեությունը արդեն պետք է տարածված լիներ Հին Հայաստանում: Քրիստոնեության տարածման համար որոշ չափով հող էր պատրաստված նախորդ դարերում և Տրդատ Գ-ի օրոք քրիստոնեության վերջնական հաստատումը դարձել էր հրամայական պահանջ: Միանգամայն ճիշտ է Հայկ Մելքոնյանը, որը, անդրադառնալով այս հարցերին, գրում է. «Քրիստոնեության մուտքը Հալաստան և նրա պետականորեն ճանաչումը Տրդատ Գ հայոց թագավորի և Գրիգոր Լուսավորչի ժամանակ ոչ պատահականորեն է տեղի ունեցել և ոչ էլ հրաշքների կամ բռնի հրամանների միջոցով, այլ քաղաքական, տնտեսական ու մշակութային նպաստավոր պայմանների ու իրադարձությունների շնորհիվ, որոնք նախապատրաստել ու անհրաժեշտ հող են ստեղծել հայ ժողովրդի շրջանում: Ամեն մի նոր գաղափարախոսություն, վարդապետություն կամ կրոն հաղթանակում է ու ամրանում այն դեպքում, երբ ժամանակի ընթացքում կենսական հենարան է ունենում»[5]:

Նախագրիգորյան շրջանում Հայաստանում քրիստոնեության տարածման փաստի օգտին է խոսում նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Ինչպես հայտնի է, սկզբնական շրջանում քրիստոնեությունը համարվում էր հրեական մի աղանդ: Առաջին քրիստոնյաները դեռևս իրենց չէին անջատում հրեաներից: Բացի դրանից, հայտնի է նաև այն, որ նոր կազմակերպվող քրիստոնեական գաղափարախոսության առաջին քարոզիչները քարոզելու էին մեկնում այն վայրերը, որտեղ կար հրեական գաղութ: Իսկ հրեաներ Հայաստանում կանգվածաբար բնակվում էին դեռևս հելլենիզմի դարաշրջանում՝ գաղթեցված Տիգրան Մեծի (95—96) կողմից[6]:

«Հայաստանի քաղաքներում կանգվածաբար ապրում էր հույն, ասորի և **հրեա** (ընդգծումը իմն է — Վ. Բ.), մասամբ էլ իրանական (պարթև, պարսիկ) ազգաբնակչությունը, որը բնակվում էր առանձին թաղամասերով՝ «ավաններով»: Հրեական Թալմուդի տվյալներից կարելի է եզրակացնել, որ հրեական համայնքը կազմում էր առանձին թաղամաս—«գաղութ» (galuta), որի գլուխ կանգնած էր «ռեսը»—res galuta: Այս թաղամասերը միևնույն ժամանակ կրոնական համայնքներ էին, քանի որ յուրաքանչյուր էթնիկական միավորը տարբերվում էր մյուսից նաև իր պաշտամունքով»[7]:

Այս հրեական համայնքները, անշուշտ, ա-

[3] **Հ. Ս. Կոգյան**, Հայոց Եկեղեցին, մինչև Փլորենտեան ժողովը, Բեյրութ, 1961, գլ. Ա—Գ, էջ 1—60:

[4] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, Բեյրութ, 1959, Ա, էջ 22:

[5] **Հայկ Մելքոնյան**, Նորից եկեղեցական մի քանի հարցերի շուրջ, Հայ Եկեղեցու ծագումը, (անտիպ), էջ 3:

[6] **Հենրիկոս Գելզեր**, Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական Եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը, Վենետիկ—Ս. Ղազար, 1896, էջ 76:

[7] Հայ ժողովրդի պատմություն, հտ. Ա, Երևան, 1971, էջ 811—812:

ռաջինը պետք է արձագանքեին նոր հանդես եկող քրիստոնեական գաղափարախոսությանը: Քրիստոնեությունը ընդունելուց հետո սրանց մի մասը հետագայում ձուլվեց հայերի մեջ[8], իսկ այն մասը, որ պահպանեց իր ինքնությունը, Փ. Բուզանդի և Խորենացու վկայությունների համաձայն, հետագայում Շապուհ Բ-ի կողմից գերեվարվեց դեպի Պարսկաստան[9]:

Իր աշխատություններից մեկում Հայկ Մելքոնյանը ցույց է տվել[10], որ Վաղարշ Ա թագավորի (51—75/81) օրոք պարթևների, հայերի, հրեաների, ասորիների և ընդհանրապես արևելյան այլ ժողովուրդների հարաբերությունները ընդլայնվել ու սերտացել էին և ստեղծվել էր նաև մի վինակցություն ընդդեմ Հռոմի: Պատերազմական գործողությունների ժամանակ Հռոմը ի վերջո տեղի է տալիս, և Վաղարշին հաջողվում է իր եղբայր Տրդատին նստեցնել հայոց գահի վրա: Այդ հաղթանակի համար իրենց հավատարիմ մասնակցությունը բերած շատ վինվորականներ, որպես վարձատրություն, ստանում են կարևոր պաշտոններ, պարգևներ ու նախարարական իրավունքներ: Նրանց մեջ էր նաև «հրեական» կրոնի հետևորդ Շամբատ-Բագարատը[11]: Հայկ Մելքոնյանը նույնիսկ գտնում է, որ «հրեական կրոն» ասելով պետք է հասկանալ այն վարդապետությունը, որը հետագայում ճանաչվեց «քրիստոնեություն» անունով»[12]:

Այնպես որ Հայաստանում հրեական գաղութի առկայությունը դեպի այստեղ պիտի ձգեր քարոզիչների, իսկ առաջին քարոզիչներ կարող էին լինել, ինչու չէ, Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները, որոնք գործել են արևելյան երկրներում՝ Միջագետքում, Ասորիքում, Պարսկաստանում: Նրանք իրենց ճանապարհորդությունների ընթացքում անպայման մտած պիտի լինեին նաև Հայաստան և, ըստ ավանդության, այստեղ էլ նահատակված[13]:

Հայկ Մելքոնյանը, վերը նշված իր աշխատության մեջ, հիմնվելով ասորական աղբյուրների վրա, կարողացել է ապացուցել, որ Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները իրոք եկել են Հայաստան և այստեղ քարոզել, և որ նրանց վերաբերող հայկական վարքերը ոչ թե հերյուրվել են կամ թարգմանություններ են ասորերենից, այլ բուն հայկական ավանդություններ են և հաստատվում են Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու կողմից[14]:

«Մենք ունենք նաև ասորական աղբյուրների վկայությունը,—գրում է Հայկ Մելքոնյանը,—ըստ որի հայկական ավանդությունը իրենց ևս հայտնի է եղել և իրենք էլ իմացել են, որ Թադեոս առաքյալը Եդեսիայում քարոզելուց հետո գնացել է Հայաստան և այնտեղ նահատակվել»[15]:

Ուսումնասիրողներին շփոթության մեջ է գցել հիմնականում այն հանգամանքը, որ հայ հին մատենագիրները լռություն են պահել նախագրիգորյան շրջանի վերաբերյալ: Սակայն պետք է նկատել, որ նույն մատենագիրները, սկսած Ե դարից, Հայ Եկեղեցու առաքելականության կետը միշտ պաշտպանել են և Գրիգորին հռչակել են Թադեոսի և Բարթողիմեոսի հաջորդ, ինչ որ չպիտի կարողանային անել, ինչպես ճիշտ կերպով եզրակացնում է Օրմանյան սրբազանը[16], եթե առաքյալներից մինչև Գրիգոր Հայաստանում քրիստոնեություն չլիներ և Հայոց Աթոռը գոյություն չունենար: Եվ դեռ ավելին, վերջերս հայտնաբերված Ագաթանգեղոսի ասորերեն համառոտ մի հին թարգմանությունը[17] լիովին փարատում է մասնագետների կասկածը և հաստատում, որ Գրիգոր Լուսավորիչը փաստորեն եղել է Թադեոս առաքյալի գործի շարունակողը:

Այսպիսով, նախագրիգորյան շրջանում քրիստոնյաների գոյությունը Հայաստանում կասկածից վեր է: Մեր նպատակից դուրս է այստեղ բերել Հայ Եկեղեցու նախագրիգորյան շրջանի գոյությունը ժխտող բոլոր փաստարկները և մեկ առ մեկ պատասխանել դրանց: Մեր համոզումն այն է, որ նախագրիգորյան շրջանին վերաբերող մի շարք ավանդություններ, որ գրի են առնվել պատմիչների կամ վարքագիրների կողմից, ստեղծվել են իրական դեպքերի հիման վրա

---

[8] **Ղուկաս վրդ. Ինճիճյան**, Հնախօսութիւն Հայաստանեայց աշխարհի, հտ. Ա, Վենետիկ, 1835, էջ 314:

[9] **Փաւստոսի Բուզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 179: **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, էջ 300:

[10] **Հ. Մելքոնյան**, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980:

[11] **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլ. Է, էջ 109:

[12] **Հայկ Մելքոնյան**, Հայ Եկեղեցու ծագումը, էջ 5:

[13] Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն, քարոզութեանն և գալստեան ի Հայս, և կատարմանն որ ի Քրիստոս, «Սուրբք Հայկականք» Ը, Վենետիկ, 1893: Վկայաբանութիւն սրբոյն Բարդողիմէոսի առաքելոյ, Սուրբք Հայկականք, ԺԹ, 1854:

[14] **Հայկ Մելքոնյան**, Հայ Եկեղեցու ծագումը, էջ 22:

[15] Նույնը՝ էջ 24:

[16] **Մ. արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, Ա, էջ 44:

[17] Այդ մասին տես **Հ. Մելքոնյան**, Ասորական աղբյուրները Հայ Եկեղեցու մասին, Էջմիածին, № Է, Ժ—ԺԲ, 1978, էջ 173:

և իրենց մեջ պարունակում են ճշմարտության մեծ կորիզ: Ըստ այդ ավանդությունների, Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները Հայաստանում ունեցել են նաև իրենց հետևորդները: Մեկ հասած բավմաթիվ ավանդություններ ցույց են տալիս, որ Ա—Գ դդ. պատմական Հայաստանի Սյունյաց աշխարհում նույնպես բավական տարածված է եղել քրիստոնեությունը: Ընդ որում, Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը հիշում է ութ եպիսկոպոսներ, որոնք Բարթողիմեոսից հետո Ավետարանը քարոզել են այդ նահանգի մեջ: Դրանք են՝ Կումսի, Բաբելաս, Մուշե, որ հետագայում անցել է Արտապի Աթոռ, Մովսես Տարոնեցի, Սահակ Տարոնեցի, Զրուանդատ, Ստեփանոս և Հովհաննես[18]:

Հ. Վ. Հացունին, իրեն հատուկ հեգնանքով, ժխտում է այս ավանդությունը և նրա վրա հիմնված բոլոր տեսությունները[19]: Կոգյանը, անշուշտ, ետ չպիտի մնար նրանից[20]: Իսկ Հ. Պողոս Անանյանը, որ բոլորովին հակառակ կարծիք ունի և ընդունում է նախագրիգորյան շրջանի քրիստոնեության գոյությունը Հայաստանում, զարմանալի կերպով ոչ մի խոսք չի ասում Սյունյաց Աթոռի վերաբերյալ[21]:

Մաղաքիա արքեպ. Օրմանյանը իր «Հայոց Եկեղեցին» աշխատության մեջ, անդրադառնալով Հայ Եկեղեցու ծագման և սկզբնավորման հարցին, գրում է. «Ամեն եկեղեցիներու ծագումին վերաբերող եղելություններ անթափանցելի վարագույրի մը ներքև ծածկված են, և մեր հետազոտություններեն կխուսափին. որովհետև կպակսին այն վավերագիրները՝ որոնք պիտի լուսաբանեին առաջին առաքյալներուն գործերը, և ընդհանրապես բովանդակ առաքելական գործունեությունը: Հռոմեական Եկեղեցին ալ, որ այդ տեսակետեն ամենեն նպաստավոր դիրքն ունեցած է, քանի որ նույնիսկ կայսրության մայրաքաղաքին մեջ յուր ծագումն ստացած է, նա ալ ծանր դժվարությանց դիմաց կգտնվի, երբ որ հարկ կըլլա Ս. Պետրոս առաքյալին Հռոմի մեջ անցուցած ժամանակը ճշտել, մինչդեռ այս խնդիրը իրեն համար էական կետ մըն է, քանի որ անոր վրա կիմնե բոլոր յուր վարդապետական կապմածը: Այս պատճառով եկեղեցական պատմությունը, երբ ավելի հաստատուն փաստեր չգտներ, կգոհանա առավելագույն հավանականության փաստերով, ավանդությանց վրա հիմնված պատճառաբանություններով, և շարունակությամբ հաստատված եղելություններով: Բավական է, որ հավանականությամբ ցուցված կետերը գրականապես հաստատված և պատմությամբ ստուգված եղելություններու հետ հակասության մեջ չգտնվին: Ասկե ավելին պետք չէ պահանջել Հայոց Եկեղեցիեն ալ, իրեն ծագումը հաստատելու համար»[22]:

Անշուշտ, եթե Հայ Եկեղեցու ծագման, և դեռ ավելին, ընդհանրապես բոլոր Եկեղեցիների ծագման վերաբերյալ պակասում են վավերագրեր, և այդ եկեղեցիների ծագումը և առաքելականությունը հաստատելու համար պետք է դիմել ավանդություններին, նույնիսկ մեծ Հռոմի աշխարհակալ Աթոռի կապակցությամբ, ապա ի՞նչ կարելի է ասել Հայաստանի լեռնային հյուսիսում, ժայռերի ու քարանձավների ծերպերում պատսպարված մի փոքրիկ քրիստոնեական համայնքի ծագման վերաբերյալ, որ դաժան հալածանքների այդ ժամանակներում, անհայտության մեջ, ճշմարտությունն ու առաքինությունը միակ վենք դարձրած, անցկացնում էր իր տառապալից, բայց գաղափարանվեր կյանքը՝ դարձած այն ցորենի ակնիվ հատիկը, որ իր բովանդակ կյանքը դնելով՝ պիտի տար բազում արդյունքներ:

Վավերագրեր չկան և ո՞րտեղից լինեն: Հեթանոսական Հայաստանից մեկ միայն չնչին թվով դրամներ և նյութական հուշարձաններ են հասել: Բայց մի՞թե պիտի ընդհիշտ մարեր դեռևս Դ դարում Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ փարթամ ընձյուղներ տված և Սահակ-Մեսրոպյան հանճարով պտղակալած քրիստոնեության առաջին սերմերի ակնիվ հիշատակը... Ո՛չ, ժողովուրդը հիշում էր նրանց, որոնց որդի պատմում նրանց կյանքի պատմությունը, հերոսական նահատակությունը, և ահա ստեղծվում են ավանդություններ, որոնք երբեմն ճոխանում են, ընդարձակվում, երբեմն մոռացվում կամ գրեթե մոռացության մատնվում, երբ առավել դաժան են լինում ժամանակները: Այդ ավանդությունները անփոփոխ չեն հասել մեկ, երբեմն տարբեր ավանդություններ համադրվել են, միացել միմյանց, երբեմն մի ավանդությունը ճյուղավորվել, տարբեր ավանդությունների հիմք է դարձել և այլն:

Ավանդությունները, ընդհանրապես, կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն ավանդությունները, որոնք իրենց խորքում պահպանել են որոշ պատմական փաստեր, իսկ երկրորդ խմբի մեջ մտնում են այն ավանդությունն-

[18] **Ստ. Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1912, էջ 21—24:

[19] **Հ. Վ. Հացունի**, նշվ. աշխատութ., էջ 108—115:

[20] **Հ. Ս. Կոգյան**, նշվ. աշխատութ., էջ 93:

[21] **Հ. Պողոս Անանյան**, նշվ. աշխատութ.:

[22] **Մ. արքեպ. Օրմանյան**, Հայոց Եկեղեցին, Բեյրութ, 1912, էջ 19:

բը, որոնք հորինվել են, երբ կարիք է զգացվել տվյալ եկեղեցու շահերը պաշտպանող փաստերի: Նույնն է նաև Սյունիքի քրիստոնեական համայնքի պարագայում, երբ տարբեր ժամանակներում կազմվել են տարբեր վրույցներ ու ավանդություններ: Այդ պատճառով էլ, բնականաբար, աղճատվել է պատմական իրականությունը և ուսումնասիրողի համար ստեղծվել դժվարին դրություն:

Նախագրիգորյան շրջանի Սյունյաց աշխարհի քրիստոնյաների վերաբերյալ մեկ հասած ավանդություններից, ինչպես ասվեց, առավել ուշագրավ է Ստեփանոս Օրբելյանի գրի առած ավանդությունը[23]: Այն կապված է Բարթողիմեոս առաքյալի Հայաստանում ծավալած քարոզչական աշխատանքների հետ[24]:

Ըստ այդ ավանդության, Բարթողիմեոս առաքյալն իր աշակերտների հետ միասին Պարսկաստանից գալիս է Հայոց երկիրը, անցնում Երասխ գետը և մտնում Սյունյաց աշխարհ, քարոզում Որդվատ գյուղում, Արևիս գավառում, Բաղաց աշխարհում, և վերջապես՝ Գողթնում, հրաշքներ գործում, բազում հետևորդներ ունենում, ընտանյոք հանդերձ դարձի բերում գավառի իշխան Շարին[25]: Օրբելյանը պատմում է, որ առաքյալը Գողթնում հիմնում է նաև մի եկեղեցի, եպիսկոպոս ձեռնադրում իր աշակերտներից մեկին՝ Կումսիին և նրան տեսուչ կարգում նորադարձ քրիստոնյաների վրա, «զի մի վերստին մոլորեսցին ի կռապաշտութիւն»[26]: Այնուհետև առաքյալը գնում է դեպի Վանանդ գյուղը: Ըստ ավանդության, այստեղ վախճանվում է իր աշակերտներից Լուսիկը, որի գերեզմանին շինում են փոքրիկ մատուռ, որտեղ «կատարին մեծ սքանչելիք և բժշկութիւն մինչև ցայսօր»[27]: Այստեղ առաքյալը կործանում է նաև մի հեթանոսական բագին և տեղը եկեղեցի շինում՝ կոչելով Ս. Թովմայի անունով, որտեղ նույնպես «լինին բազում նշանք»[28]:

Այնուհետև առաքյալը, ըստ Օրբելյանի պատմության, շարժվում է դեպի Դվին[29], իսկ ըստ վարքի՝ դեպի Թադեոսի վիճակը[30]:

Այս ավանդությունը, որ դեռ ունի իր շարունակությունը, ինչ խոսք, զուրկ չէ պատմական հիմքից, թեև այնտեղ կան վիպական որոշ տարրեր:

Կարծում ենք, որ Օրբելյանն ինքը խմբագրել է այդ ավանդությունը և վտել այն հնարավորին չափով վիպական տարրերից. վիպական տարրերից կարելի է համարել, թերևս, գավառի իշխանին և իր կնոջն ու ընտանիքին դարձի բերելու պատմությունը, որ հատուկ է բոլոր նմանատիպ ավանդություններին[31]:

Հ. Վ. Հացունին ոչ մի հավատ չի ընծայում ավանդությանը[32] և ընդհանրապես գտնում, որ Ս. Բարթողիմեոս առաքյալը Հայաստանում չի եղել և ոչ մի քարոզություն էլ չի ծավալել այնտեղ: Իսկ Կոգյանը գրում է. «Հայ նախնական ավանդություն մը ի զուր կը փնտրենք հայ հնագույն պատմագիրներու մոտ: Անոնք ոչինչ գիտեն Բարթողիմեոս Առաքյալի հայկական առաքելականության մասին: Ագաթանգեղոս, Բուզանդ, Փարպեցի, Եղիշե—այնքան նախանձախնդիր հայ փառքերու—անծանոթ են փառքին Բարթողիմեոսի քարոզչական գործունեության հայոց մեջ»[33]:

Այսպիսով, Կոգյանը անտեսում է «Վկայաբանութիւն սրբոյն Բարդողիմէոսի առաքելոյ» աշխատությունը[34]: Բայց ինչո՞ւ նա չի հիշատակում Խորենացուն, որ իր գրքում պարզ ու հստակ գրել և հաստատել է. «Բայց վիճակեցաւ հայոց և Բարթուղիմէոս առաքեալ, որ և կատարեցաւ առ մեկ յԱրբանոս քաղա-

---

[23] **Ստ. Օրբելյան,** Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 21—24:

[24] Վկայաբանութիւն Սր. Բարդողիմէոսի Առաքելոյ, Սոփերք, ԺԹ, էջ 24:

[25] **Ստ. Օրբելյան,** Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 21:

[26] Անդ, էջ 22:

[27] Անդ:

[28] Անդ:

[29] **Ստ. Օրբելյան,** Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 22.

[30] Թադեոսի վիճակը Հայաստանի Արտազ գավառն էր, Վասպուրականի մեջ, որտեղ Թադեոս առաքյալը նիստել էր եկեղեցի և որտեղ, ըստ ավանդության, գտնվում է իր գերեզմանը:

[31] Օրբելյանը պատմում է, թե Որդվատ գյուղի ջուրը վնասակար էր և ամեն տարի հեղեղում էր այգիներն ու արտերը: Բարթողիմեոսը իր հետևորդների հետ աղոթում է, և ջուրը կտրվում է: Ինչ խոսք, երևում է, որ բուն ավանդությունը ավելի մանրամասն է եղել, վիպական տարրերով հարուստ, թե ինչպես էր ջուրը բարձրանում և հեղեղում այգիները, և ահա Բարթողիմեոսը, որ մինչ այդ հաջողություն չէր ունենում իր քարոզություններում, հանդարտեցնում է ջուրը և սարսափահար ժողովուրդը երկրպագում է նրան, կարծելով, թե Աստված է: Բուն ավանդությունը գուցե ունեցել է նաև Բարթողիմեոսի խոսքը՝ ուղղված ժողովրդին: Նման պատումները, ընդհանրապես, հատուկ են բոլոր ավանդություններին: Բայց Օրբելյանը, ըստ երևույթին, խմբագրել է ավանդությունը, ամեն կերպ աշխատել համառոտել այն, տալով կարծեցյալ բուն պատմական եղելությունը՝ խուսափելով ավելորդ վիպական ձգձգումներից:

[32] **Հ. Վ. Հացունի,** Կարևոր խնդիրներ, էջ 56—88:

[33] **Հ. Ս. Կոգյան,** Հայոց Եկեղեցին, էջ 30:

[34] «Սոփերք Հայկականք» ԺԹ, էջ 17:

քի»[35]: Գուցե նա կասկածո՞ւմ է իր համար «ոչ հին պատմիչ» Մ. Խորենացու՝ հայ փառքի նկատմամբ ունեցած նախանձախնդրության վրա:

Կոգյանը ոչ միայն կարևորություն չի տալիս Մ. Խորենացու այս վկայությանը, այլև անտեսում է առաքյալի՝ մեկ հասած վկայաբանությունը: Ի վերջո, մի՞թե Բուլանդի, Փարպեցու և Եղիշեի լռությունը հիմք է տալիս անտեսելու Բարթողիմեոս առաքյալի վարքը: Նրանք գուցե և լռել են այն պատճառով, որ արդեն գրված է եղել այդ մասին: Ի վերջո մի՞թե բավական չէ երկու թանկագին աղբյուրների վկայությունը՝ համոզվելու համար, որ հայկական ավանդությունը, առաքյալի մասին, պատմական եղելություն է: Պետք է նշել նաև, որ ասորի եկեղեցական մեծ գործիչ և նշանավոր պատմիչ Միքայել Ասորին նույնպես հաստատում է Բարթողիմեոսի Հայաստանի առաքյալ լինելը և գրում, որ Բարթողիմեոսը նահատակվել, խաչվել է Հայաստանում և թաղվել իր կառուցած եկեղեցում[36]:

Հայկական ուրիշ ավանդություններ էլ կան, որոնք հաստատում են Բարթողիմեոս առաքյալի Հայաստան գալը: Այսպես, ըստ մի ավանդության, Բարթողիմեոս առաքյալը հիմնում է Հոգեսց վանքը և այն վերածում կուսանոցի՝ այնտեղ դնելով Աստվածածնի առաքելագործ պատկերը[37]:

Իսկ մի այլ նվիրական ավանդության համաձայն էլ Ս. Բարթողիմեոս առաքյալը իր հետ Հայաստան է բերում Քրիստոսից ավանդ մնացած մեկ շիշ ալևիվ և անուշահոտ յուղ: Եվ այդ յուղն է, որ միշտ նորի հետ խառնվելով, հասել է մինչև մեր օրերը՝ Ս. Մյուռոն անվան տակ[38]:

Հետաքրքիր է մեկ ուրիշ ավանդություն, որն ուղղակի կապված է Սյունիքի (Գողթնի) հետ: Ավանդությունը գտնվում է Վարդան Արևելցու «Աշխարհացույց»-ի ձեռագիր օրինակներից մեկի լուսանցքում, ուր գրված է. «Գ հատ մանանայ բերաւ ի Հայս ի սբ. առաքելոյն Բարդողիմէոսէ և եդ վայն տփոլ ի հիմն եկեղեցւոյն, որ հանդէպ հայի Գողթան գաւառին, առ Երապխայ գետոյն, ի տեղւոջ, որ Մաղարթն կոչեն»[39]:

Այս ավանդությունը, անշուշտ, պատմական հիմքից զուրկ է: Մենք չենք ասում, թե իսկապես Բարթողիմեոս առաքյալը երեք հատ մանանա է բերել, տուփով դրել եկեղեցու հիմքում և այլն: Բայց, այնուամենայնիվ, ավանդությունը իրենից հետաքրքրություն է ներկայացնում և չի կարելի հիմնովին ժխտել այն: Ավանդությունը, ավելի ուշ շրջաններում, ծագել է Բարթողիմեոսի հայտնի բուն ավանդությունից և փաստորեն հաստատում է այդ բուն ավանդության գոյությունը:

Բարթողիմեոս առաքյալի Հայաստան գալը և այստեղ քարոզելը պատմական անուրանալի ճշմարտություն է և ոչ մի կասկած չի հարուցում: Ճիշտ է, Եվսեբիոս Կեսարացին տեղեկություններ է տալիս նրա Հնդկաստան գնալու մասին[40], բայց այդ փաստ չէ, որ նա չի եղել նաև Հայաստանում:

Բարթողիմեոսը կոչված էր քարոզելու ոչ միայն Հնդկաստանում, այլև ամբողջ Արևելքում: Հայկական վկայաբանության համաձայն, Հնդկաստանից հետո առաքյալը լինում է Բասրայում, Գերմանիկում, և ապա՝ «գնացեալ անտի սրբոյն եհաս յերկիրն Պարթևաց, և Մարաց, և Եղիմացւոց, և քարոզէր նոցա կբանն կենաց»[41]: Այս երկրներում լինելուց հետո «անցեալ գնաց ի Գողթն գաւառ Հայոց և փութացաւ հասանել ի վիճակ Թադէոսի ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ»[42]:

Այսպիսով, վարքն էլ հաստատում է Օրբելյանի գրի առած ավանդության այն վկայությունը, ըստ որի Բարթողիմեոս առաքյալը քարոզել է Գողթնում, հետևաբար նաև՝ Սյունիքում:

Ս. Բարթողիմեոս առաքյալի քարոզությունները Հայաստանում, ի մասնավորի Սյունյաց աշխարհում, անպտուղ չմնացին: Արդեն վերևում տեսանք, որ առաքյալը Սյունյաց աշխարհում ունեցավ բազում հետևորդներ, դարձի բերեց նույնիսկ տեղի իշխանական տան անդամներին: Սյունյաց առաջին տեսուչի՝ Բարթողիմեոսի կողմից ձեռնադրված Կումսիի մասին այլ տեղեկություններ չունենք: Կարելի է կարծել, որ իր բնական մահով է վախճանվել, քանի որ Օրբելյանը գրում է. «Յետ այսորիկ **վախճանեցաւ** (ընդգծումը իմն է—Վ. Բ.) Կումսի»[43]:

---

35 **Մովսես Խորենացի**, Պատմութիւն հայոց, էջ 158:

36 Տե՛ս Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի ասորւոց պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 101: Տես նաև **Հ. Մելքոնյան**, Հայ Եկեղեցու ծագումը, էջ 32:

37 Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 295:

38 Տե՛ս **Թորգոմ աբեղա Փոստաճյան**, Հայ Եկեղեցւոյ ծագումն ու կարգացումը, «Հայրենիք» ամսագիր, 1955, մարտ, էջ 26—36:

39 Մատենադարան, ձեռ. № 5128, էջ 187բ:

40 «Եւսեբիոս Կեսարացւոյ Եկեղեցական պատմութիւն», դպր. Ե, գլ. Ժ, էջ 364:

41 «Վկայաբանութիւն», էջ 22:

42 Անդ, էջ 24:

43 **Ստ. Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 22:

Արտապան հիշատակարանը[44] Կումսիի ժամանակակից Զիմենտոս Հայրապետի մասին նույնպես գրում է, որ խաղաղ մահվամբ է վախճանվել. «Սա իբր չորս ամ հովուեաց կիաւատացեալսն Քրիստոսի և **վախճանեցաւ**»[45] (ընդգծումը իմն է—Վ. Բ.): Հետևաբար կարելի է ենթադրել, որ քրիստոնեական առաջին եկեղեցին Հայաստանում, սկզբնական շրջանում, գտնվում էր համեմատաբար խաղաղ վիճակի մեջ, չկային լուրջ հալածանքներ:

Կումսիին հաջորդում է «վխուժիկ ումն Բաբելաս անուն»[46]: Սրա մահվանից հետո սյունեցիք Մուշե անունով մեկին ուղարկում են Թադեոսի վիճակ՝ ձեռնադրվելու համար: Բայց այս Մուշեն, ինչպես գրում է պատմիչը[47], չի կարողանում Սյունիք վերադառնալ: Սյունյաց համայնքը ընկնում է անտերունչ վիճակի մեջ:

Այնուհետև Օրբելյանը մի միջանկյալ միտք է արտահայտում, թե մինչև Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ Սյունյաց համայնքը մշտապես ենթարկվել է հալածանքների: Այս միջանկյալ նախադասությունից հետո հիշում է ևս հինգ եպիսկոպոսներ՝ Մովսես Տարոնացի, Սահակ Տարոնացի, Զրուանդատ, Ստեփանոս և ապա՝ Հովհաննես[48]:

Որոշ մասնագետներ Օրբելյանի միջանկյալ այս խոսքերը սխալ են ընկալել ու շփոթության մեջ ընկնելով՝ ճիշտ չեն մեկնաբանել և այդ հինգ եպիսկոպոսներին տարել են Գրիգոր Լուսավորչից հետո[49]: Օրբելյանի Պատմության առաջին հրատարակիչ Կարապետ վրդ. Շահնազարյանն էլ, շփոթության մեջ ընկնելով, գրել է. «Ի գլուխ հինգերորդ ասէ Ստեփաննոս Օրբելեան թէ՝ սուրբն Գրիգոր, յետ մկրտութեան իշխանին Սիւնեաց, ետ նմա կեպիսկոպոս ումն (որ թուի լինել Տիրիկէս ասորի), և սակայ մի ստորն կԳրիգորիս՝ պաշակերտն իւր: Մոռացեալ զկնի կոր ինչ գրեացն ի վերոյ, յաւելու ասէն թէ սուրբ Լուսաւորիչն կացոյց զՄովսէս Տարօնացի յառաջնորդութիւն Սիւնեաց և այլն: Ի սկզբան 72 գլխոյն դարձեալ կրկնէ զԳրիգորիս՝ առաջին եպիսկոպոս Սիւնեաց, կարգեալ ի սուրբ Լուսաւորիչէն»[50]:

Իզուր է պատմության հրատարակիչը Օրբելյանին մոռացկոտ անվանում: Այդ ինչպե՞ս պատահեց, որ բալմահիմտա մատենագիրը հանկարծ մոռանում է ընդամենը հինգ րոպե առաջ գրածը, որ գտնվում էր նախորդ էջում: Միանգամայն ճիշտ է Մաղաքիա արքեպ. Օրմանյանը, որ նշում է, թե Լուսավորչի անունը մի միջանկյալ ակնարկ է և թե Մովսես Տարոնացին, Սահակը, Զրուանդատը և այլն, Մուշեից հետո և Լուսավորչից առաջ եղող եպիսկոպոսներ են[51]:

Կարծում եմ, չպետք է ոմանց շփոթության մեջ գցի այն հանգամանքը, որ Գողթնի Աթոռը մկրտում ենք «Սյունյաց» անվամբ: Իզուր է Հ. Վարդան Հացունին հակադրվում Օրմանյանին՝ գրելով. «Ակգապատումի ճարտարություններեն մին եղավ՝ Գողթան նախագրիգորյան անգո առաջնորդները «Սյունյաց եպիսկոպոսներ» ընել»[52]:

Գողթնը այդ շրջանում Սյունյաց գավառներից մեկն էր, և չպետք է այն անջատել Սյունիքից: Հետագայում էլ՝ 450 թ. Աշտիշատում գումարված ժողովում և այնուհետև Դվինի 506 թ. ժողովում չեն հիշում Գողթան առանձին առաջնորդներ[53]: Զ դարում, երբ Գողթնը անջատվում է Սյունիքից, ունենում է նաև իր առանձին եպիսկոպոսը: Այսպես, Դվինի 555 թ. ժողովի մեջ Սյունյաց Պետրոս եպիսկոպոսի հետ հիշվում է Գողթան Հոյս եպիսկոպոսը[54]:

Իրականությունն այն է, որ Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված Սյունյաց Աթոռը փաստորեն հանդիսանում է այս նախագրիգորյան շրջանի Գողթնի Աթոռի անմիջական շարունակությունը: Ստեփանոս Օրբելյանը ինքն էլ գրում է. «Բայց գիտեա՛ զի ոչ եթէ հատուածեալ էին սոքա ի Սիւնեաց, այլ յառաջն մինչդեռ ոչ էին հաւատացեալ, և ոչ էին կարգած յաշխարհս Հայոց եպիսկոպոսք, սոքա առանձին ունէին տեսուչս: Իսկ ի լուսաւորել սրբոյն Գրիգորի զՀայս, և ի կարգաւորել զբարձ և զաստիճան եպիսկոպոսացն և զսոսա յանձնեաց եպիսկոպոսացն Սիւնեաց զի նոցա հրամանաւ և ի

---

[44] Արտապան հիշատակարան ասելով ի նկատի ունենք նախագրիգորյան շրջանում Արտապի Աթոռը (որ կոչվել է նաև Թադեոսի վիճակ—ստ. ծնթ. 30) Եպիսկոպոսների գավազանագիրքը, որ գտնվել է ԺԳ դարում գրված մի հիշատակարանի մեջ և տպագրվել «Արարատ» ամսագրում, 1868 թ.:

[45] Արարատ, Ա, 1868, էջ 102:

[46] **Ստ. Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիւնեաց, էջ 22:

[47] Անդ, էջ 23:

[48] Նույն տեղում:

[49] Տե՛ս հատկապես **Ե. Լալայան**, Գողթն, Թիֆլիս, էջ 31:

[50] Պատմութիւն նահանգին Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթագրութեամբք Կարապետ վրդ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, հտ. Ա, էջ 318:

[51] **Օրմանյան**, Ազգապ., Ա, էջ 55:

[52] **Հ. Վ. Հացունի**, նշվ. աշխ., էջ 113:

[53] Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց Պատերազմին, Երևան, 1957, էջ 27 և Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 41:

[54] Գիրք թղթոց, էջ 73:

ներքոյ կացցեն հնավանդութեամբ. որում վկայ առաջին կաթողիկոսացն շրջաբերական թուղթք և հին գաւական գաւառացն որ վասն հարկաց եկեղեցւոյն, զի լիով ունի գրեալ յինքեան զբովանդակ գաւառն Գողթան»[55]: Այնուհետև Օրբելյանը, որպեսզի ավելի համոզիչ դարձնի իր խոսքը, ավելացնում է. «Նմանապէս և իշխանք Գողթան ոչ եթէ յայլմէ էին, այլ ի նոյն Սիսական ցեղէ, ըստ մասին ի ժառանգութիւն առեալ էին զայս գաւառ, որպէս ցուցանէր քեզ Մովսէս Խորենացի»[56]:

Այսպիսով, ըստ Սյունյաց պատմիչի հաղորդած տեղեկությունների, որոնք հաստատվում են նաև այլ ավանդությունների գոյությամբ, քրիստոնեական լույսը Սյունիքում ծագել է դեռևս նախագրիգորյան շրջանում, Ս. Բարթողիմեոսի կողմից, և այստեղ տևապես գոյություն է ունեցել քրիստոնեական համայնք: Որքա՞ն միամիտ է հնչում Հացունու այն պատճառաբանությունը, թե դեռևս Գրիգոր Լուսավորչի և դեռ ավելին՝ Ս. Մեսրոպի ժամանակ Սյունյաց աշխարհը հեթանոս էր, էլ ուր մնաց՝ նախագրիգորյան շրջանում[57]: Որ Մեսրոպի ժամանակ Սյունիքում, հատկապես Գողթն գավառում, հեթանոս շրջաններ կային, այդ չենք ժխտում: Խոսելով Սյունիքում նախագրիգորյան շրջանի քրիստոնեության գոյության մասին, մենք չենք ասում, թե ամբողջ Սյունիքը քրիստոնյա էր: Ցանկանում ենք ասել այն, որ Սյունիքի որոշ բնակավայրերում, լեռնային շրջաններում և անմատչելի վայրերում, եղել են քրիստոնեական փոքրիկ համայնքներ կամ մեկ համայնք:

Սյունիքը միշտ էլ եղել է հակադրությունների երկիր: Ահա ինչ է գրում Ե. Լալայանը.. «Գողթան գավառը թե՛ հեթանոսության և թե քրիստոնեության շրջանում շատ ջերմեռանդ և ավանդապահ է եղել: Լեռնոտ, առանձնացած երկիր լինելով, այստեղ հեթանոսությունը կարողացել է պահպանվել մինչև Ս. Մեսրովբի օրերը, **ինչպես և քրիստոնեությունը Ս. Բարդողիմեոս առաքյալի քարոզությամբ այստեղ սկսվելով կարողացել է հարատևել մինչև Ս. Լուսավորիչ»**[58] (ընդգ. իմն է—Վ. Բ.):

Շատ հավանական է նաև, որ հավատացյալների մի մասը հայեր չէին, այլ՝ հրեաներ, հույներ, պարսիկներ, գուցե նաև ուրիշ տեղերից եկած և այստեղ հաստատված այլ անձնավորություններ կամ գործիչներ: Իսկ հալածանքների ժամանակ քրիստոնյաները պատսպարվելու թերևս ավելի հարմար վայրեր չէին գտնի, քան Սյունյաց դժվարամատչելի լեռներն ու ձորերը: Օրբելյանը Սյունյաց քրիստոնեական համայնքի մասին գրում է. «Սոքա կային մնային անտէրունչք բնակեալ այսր և անդր. և ոմանք դողեալք ի լերինն Գարուայ միայնատրութեամբ զկեանս իւրեանց վարժէին զբաղումս ուսուցանելով յոլով ժամանակօք՝ մինչ ի գալ մեծի Լուսաւորչին ի Հայս, և ի լուսաւորելն զամենայն ազգխարհս Հայոց»[59]:

Սյունյաց առաջին եպիսկոպոսի՝ Կումսիի անվան ծագումը անհայտ է: Գուցե նա հրեա էր կամ մի այլ ժողովրդի ներկայացուցիչ, որ Բարթողիմեոս առաքյալին միացել էր մինչ նրա Հայաստան գալը: Իհարկե, չի բացառվում նաև նրա հայ լինելը: Համենայն դեպս կարող էր լինել մոգերից մեկը, որ առաքյալի քարոզության շնորհիվ նոր հավատքն էր ընդունել[60]:

Բաբելասի համար ասվում է, որ «խուժիկ» էր, այսինքն՝ պարսիկ[61]: Մուշե անունը հրեական Մովսեսի ասորական ձևն է[62]: Հետագա հիշվող հինգ եպիսկոպոսներից մեկի անունը Զրուանդատ է, որը հավանաբար պարսկական անուն է, իսկ մնացած չորսինը՝ սուրբգրական անուններ են: Այս չորս անձնավորությունների ազգության հարցը դեռ չի լուսաբանված: Դժվար է կարծել, որ նրանք բոլորն էլ հրեաներ էին: Հավանաբար այդ ժամանակ արդեն սովորություն էր դարձել սուրբգրական անունների օգտագործումը:

---

[55] **Ստ. Օրբելյան**, Պատմութ., էջ 23: Դժբախտաբար Օրբելյանի հիշած այդ վավերագրերը կորել են, եթե ոչ՝ ավելի փաստացի աղբյուրներ կունենայինք ձեռքի տակ: Այնուամենայնիվ Օրբելյանը մեր ամենահավաստի և արժանահավատ պատմիչներից մեկն է և դժվար է կարծել, թե նա կեղծել է:

[56] Նույն տեղում:

[57] **Հացունի**, նշվ. աշխ., էջ 111:

[58] **Ե. Լալայան**, Գողթն, Թիֆլիս, էջ 31:

[59] **Օրբելյան**, Պատմութ., էջ 22:

[60] Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Բարդողիմէոսի, Սուրբք Հայկականք, էջ 24:

[61] **Օրբելյան**, Պատմութ., էջ 22:

[62] Տես **Աճառյան**, Անձնանունների բառարան: